* Եւ տեսին երազ երկոքին. զիւրաքանչիւր երազ 'ի միում գիշերի։ տեսիլ երազոյ տակառապետին և մատակարարին որ էին արքային եգիպտացւոց, մինչ էին 'ի բանտի անդ։ * Եմուտ առ նոսա Յովսէփ ընդ առաւօտն. և ետես զնոսա՝ և էին խռովեալք։ * եհարց ցներքինիսն փարաւոնի որ էին ընդ նմա 'ի բանտի անդ առ տեառն նորա՝ և ասէ. ընդէ՞ր տրտում են երեսք ձեր այսօր։ * Եւ նոքա ասեն ցնա. երազ տեսաք, և ոչ ոք իցէ որ մեկնիցէ զնա։ և ասէ ցնոսա Յովսէփ. ոչ ապաքէն 'ի ձեռս Աստուծոյ իցէ մեկնութիւն նոցա. պատմեցէք ինձ։ * Եւ պատմեաց տակառապետն զերազն իւր Յովսեփայ՝

[Genèse, XXXIX, 23—XL, 9]

և ասէ. Թուէր ինձ 'ի տեսլեան իմում, որթ մի առաջի իմ։ և յորթն երեք ուռք՝ կանաչք յոյժ. և ունէր երիս ողկոյզս հասեալս ողկոյզ խաղողոյ։ * և բաժակն փարաւոնի 'ի ձեռին իմում։ առնուի զխաղողն, և ճմլէի 'ի բաժակն փարաւոնի, և տայի զբաժակն 'ի ձեռս փարաւոնի։ * Եւ ասէ ցնա Յովսէփ. այս է մեկնութիւն նորա։ երեք ուռքն, երեք աւուրք են։ * այլ ևս երեք աւուրք, և յիշեսցէ փարաւոն զիշխանութիւն քո, և անդէն 'ի նմին տակառապետութեան քում կացուսցէ զքեզ. և տացես զբաժակն փարաւոնի 'ի ձեռս նորա. ըստ առաջնոյ իշխանութեան քո՝ որպէս և էիր տակառապետ։ * Այլ զիս յիշեսջիր յորժամ բարի լինիցի քեզ. և արասցես ինձ ողորմութիւն. և յիշեսցես զիս առաջի փարաւոնի. և հանցես զիս 'ի բանտէ աստի յայսմանէ։ զի գողանալով գողացան զիս յերկրէն եբրայեցւոց. և աստ՝ ինչ ոչ արարի. և արկին զիս 'ի տուն գբոյս այսորիկ։

* Իբրև ետես մատակարարն թէ ուղիղ մեկնեաց, ասէ ցՅովսէփ. և ես տեսանէի յերազի, Թուէր ինձ թէ երիս խանս նաշհւոյ ունէի 'ի գլուխ իմում։ * և 'ի վերնում խանին յամենայնէ զոր ուտէր արքայ փարաւոն՝ գործ մատակարարաց. և թռչունք ուտէին զնա 'ի խանէ անտի՝ որ էր 'ի վերայ գլխոյ իմոյ։ * Պատասխանի ետ Յովսէփ՝ և ասէ ցնա. այս է մեկնութիւն նորա։ երեք խանքն երեք աւուրք են։

[Genèse, XL, 10—18]

*յետ երից աւուրց բարձցէ փարաւոն զգլուխ քո 'ի քէն, եւ կախեսցէ զքեզ զփայտէ. եւ կերիցեն թռչունք երկնից զմարմին քո 'ի քէն:

* Եւ եղեւ յաւուրն երրորդի, օր ծննդոց էր փարաւոնի, եւ առնէր ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց: եւ յիշեաց զիշխանութիւն տակառապետին, եւ զիշխանութիւն մատակարարին 'ի մէջ ծառայից իւրոց: * Եւ կացոյց զտակառապետն անդէն յիշխանութեան իւրում. եւ ետ զբաժակն 'ի ձեռս փարաւոնի: * Եւ զմատակարարն կախեաց զփայտէ, որպէս եւ մեկնեացն Յովսէփ: * Եւ ոչ յիշեաց տակառապետն զՅովսէփ, այլ մոռացաւ զնա:

* Եւ եղեւ յետ երկուց ամաց աւուրց, ետես փարաւոն երազ: Թուէր թէ կայցէ յեզր գետոյ: * Եւ ահա որպէս թէ 'ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք գեղեցիկք տեսանելով, եւ ընտիրք մարմնով, եւ արածէին 'ի խաղի անդ: * Եւ այլ ևս եւթն երինջք ելանէին յետ նոցա 'ի գետոյ անտի. զազիրք տեսանելով. եւ վտիտք մարմնով. եւ արածէին առ այլ երնջովքն առ եզեր գետոյն: * Եւ ուտէին եւթն երինջքն զազիրք տեսլեամբ եւ վտիտք մարմնովք, զեւթն երինջս գեղեցիկս տեսլեամբ եւ զընտիրս: Զարթեաւ փարաւոն. * եւ անդրէն 'ի քուն եմուտ: եւ ետես երազ երկրորդ. եւ ահա եւթն հասկ ելանէին 'ի միում բնի' ընտիրք եւ գեղեցիկք: * Եւ ահա եւթն այլ հասկք սինք եւ խորշակահարք ելանէին

[Genèse, XL, 18—XLI, 6].

յետ նոցա ։ * Եւ կլանէին եւթն հասկքն սինք և խորշակահարք զեւթն հասկսն՝ զընտիրս և զատոքս ։ Զարթեաւ փարաւոն, և էր երազ ։

* Եւ եղև առաւօտ, և խռովեցաւ անձն նորա ։ Եւ առաքեաց կոչեաց զամենայն երազահանս Եգիպտոսի, և զամենայն իմաստունս նորա, և պատմեաց փարաւոն զերազն իւր ։ և ո՛չ ոք էր որ մեկնէր զերազն փարաւոնի ։ * Եւ խօսեցաւ տակառապետն առաջի փարաւոնի և ասէ. զյանցանս իմ յիշեցուցանեմ այսօր ։ * Բարկացաւ փարաւոն ծառայից իւրոց. և եդ զմեզ ՚ի բանտի ՚ի տան դահճապետին, զիս և զմատակարարն ։ * Եւ տեսաք երկոքին երազ ՚ի միում գիշերի ես և նա. և իւրաքանչիւր ըստ երազոյ իւրում տեսանէաք ։ * Եւ էր անդ ընդ մեզ պատանի մի մանուկ՝ եբրայեցի, ծառայ դահճապետին. և պատմեցաք նմա ։ * Եւ մեկնեաց մեզ զերազսն մեր. առն ըստ իւրաքանչիւր երազոյ մեկնեաց ։ և եղև որպէս մեկնեացն մեզ, նոյնպէս և պատահեաց. ինձ գալ հասանել յիշխանութիւն. և նմա կախել զփայտէ ։

* Առաքեաց փարաւոն և կոչեաց զՅովսէփ ։ և հանին զնա ՚ի բանտէ անտի. և փոքրեցին զհերս նորա, և փոխեցին զպատմուճան նորա. և եկն առաջի փարաւոնի ։ * Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ, երազ տեսի՝ և չիք ոք որ մեկնէ զնա. բայց ես լուայ զքէն, ասեն եթէ լսես զերազս՝ մեկնես ։ * Պատասխանի ետ Յովսէփ՝ և ասէ ցփարաւոն ։ առանց Աստուծոյ

[Genèse, XLI, 6—16].

ոչ լինի պատասխանի փրկութեան փարաւոնի: * Խօսե-
ցաւ փարաւոն ընդ Յովսեփայ՝ և ասէ. Թուէր 'ի
տեսլեան իմում, եթէ կայի յեզր գետոյ. և որպէս
թէ 'ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք ընտիրք
մարմնովք և գեղեցիկ տեսանելով, և արածէին 'ի
խաղի անդ: * Եւ ահա այլ ևս եւթն երինջք ելանէին
զկնի նոցա 'ի գետոյ անտի. դժընդակք և զազիրք
տեսանելով յոյժ, և վտիտք մարմնովք. որպիսի ո՛չ
տեսի յամենայն երկրիս եգիպտացւոց զազրագոյնս քան
զնոսա: * Եւ ուտէին եւթն երինջքն վտիտք և զազիրք
զեւթն երինջսն զառաջինս զգեղեցիկսն և զընտիրս:
* և մտանէին յորովայն նոցա, և ո՛չ երևէին. և
երեսք նոցա զազիրք իբրև զառաջինն: Զարթեայ,
և դարձեալ ննջեցի: * և տեսանէի միւսանգամ յերազի:
որպէս թէ եւթն հասկ ելանէին 'ի միում փնջի՝ լիք
և գեղեցիկ: * և այլ եւթն հասկ ապականեալք,
ազազունք և խորշակահարք, ելանէին մօտ առ նոսա:
* և կլանէին եւթն հասկքն ազազունք և խորշա-
կահարք՝ զեւթն հասկս զգեղեցիկս և զատոքս: Եւ
պատմեցի երազահանացն, և ոչ ոք էր որ մեկնէր ինձ:
* Եւ ասէ Յովսէփ ցփարաւոն. երազն փարա-
ւոնի մի է. զոր ինչ Աստուած առնելոց է եցոյց
փարաւոնի: * Եւթն երինջքն գեղեցիկքն՝ եւթն ամ
են. և եւթն հասկն գեղեցիկք՝ եւթն ամ են: երազն
փարաւոնի մի է: * և եւթն երինջքն տգեղք և
վտիտք որ ելանէին զհետ նոցա, եւթն ամ են. և

[Genèse, XLI, 17—27].

եւթն հասկքն ոսինք և խորշակահարք. լիցին զեւթն ամ սով: * Բանն զոր ասացի փարաւոնի՛ այն է. զոր ինչ Աստուած առնելոց է, եցոյց փարաւոնի: * Ահա ամք եւթն եկեսցին բազում լիութեան յամենայն երկիրս եգիպտացւոց: * Եւ յետ այնորիկ եկեսցէ եւթն ամ սովոյ, և մոռասցին զլիութիւնն յամենայն երկիրս եգիպտացւոց՝ և սպառեսցէ սովն զերկիր: * և ոչ ծանիցի լիութիւնն յերեսաց սովոյն որ գայցէ յետ այնորիկ. քանզի սաստիկ լինիցի յոյժ: * Այլ վասն կրկնելոյ երազոյն փարաւոնի երկիցս անգամ. զի ճշմարիտ է բանն առ յԱստուծոյ, և փութասցի Աստուած առնել զնա: * Եւ արդ՝ տես. խնդրեա՛ այր մի իմաստուն և խորհրդական փարաւոնի. և կացուսցես զնա ՚ի վերայ երկրիս եգիպտացւոց: * Եւ արասցէ՛, և կացուսցէ գործակալս փարաւոնի ՚ի վերայ երկրիս: և հինգերորդեսցեն զարմտիս երկրիս եգիպտացւոց զեւթն ամացն լիութեան: * և ժողովեսցեն զամենայն կերակուրս զեւթն ամացն բարեաց եկելոց: և ժողովեսցի՛ ցորեան ընդ ձեռամբ փարաւոնի. և կերակուրք ՚ի քաղաքս պահեսցին: * Եւ եղիցի կերակուրքն պահեալ երկրիս յեւթն ամս սովոյն որ լինիցին յերկրիս եգիպտացւոց. և մի սատակեսցի երկիրս ՚ի սովոյ:

* Եւ հաճոյ թուեցաւ բանքն առաջի փարաւոնի, և առաջի ամենայն ծառայից իւրոց: * և ասէ փարաւոն ցամենայն ծառայս իւր. միթէ գտանիցեմք

[Genèse, XLI, 28—38].

այր այնպիսի որ ունիցի զոգի Աստուծոյ յանձին իւրում: * Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ. որովհետեւ եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն. չիք այր իմաստնագոյն եւ խորհրդական քան զքեզ: դու լիցիս 'ի վերայ տան իմոյ. եւ բերանոյ քում հնազանդ լիցի ամենայն ժողովուրդ իմ. բայց միայն աթոռովս 'ի վերոյ եղէց ես քան զքեզ: * Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ. ահաւասիկ կացուցի զքեզ այսօր 'ի վերայ երկրիս եգիպտացւոց: * Եւ հանեալ փարաւոնի զմատանին իւր 'ի ձեռանէ իւրմէ եդ 'ի ձեռին Յովսեփայ. եւ զգեցոյց նմա պատմուճան բեհեզեայ, եւ արկ մանեակ ոսկի 'ի պարանոց նորա: * Եւ եհան զնա յերկրորդ կառս իւր. եւ քարոզ կարդայր առաջի նորա: եւ կացոյց զնա 'ի վերայ երկրին եգիպտացւոց: * Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ. ահաւասիկ ես փարաւոն. առանց քո ոչ ոք համբարձցէ զձեռս իւր եւ զոտս իւր 'ի վերայ ամենայն երկրիս եգիպտացւոց: * Եւ կոչեաց փարաւոն զանուն Յովսեփայ՝ Փսոմփթոմփանէ: եւ ետ նմա զԱսանէթ դուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի կնութեան:

* Եւ ել Յովսէփ յերեսաց փարաւոնի: * Եւ էր Յովսէփ ամաց երեսնից յորժամ ընծայեցաւ առաջի փարաւոնի արքային եգիպտացւոց: ել Յովսէփ յերեսաց փարաւոնի, եւ շրջեցաւ ընդ ամենայն Եգիպտոս: * Եւ արար երկիրն յեւթն ամս լիութեանն

[Genèse, XLI, 39—47].

արդիւնս: * Եւ ժողովեաց զամենայն կերակուրս ամացն եւթանց, յորս էր լիութիւնն յերկրին եգիպտացւոց: Եւ համբարեաց կերակուրս 'ի քաղաքս. զկերակուր դաշտաց քաղաքին որ շուրջ զնովաւ. եւ համբարեաց 'ի նմա: * Եւ ժողովեաց Յովսէփ ցորեան իբրեւ զաւազ ծովու բազում յոյժ. մինչեւ ոչ կարէր համարել. քանզի ոչ գոյր թիւ: * Եւ եղեն Յովսեփու երկու որդիք մինչ չեւ եկեալ էր եւթն ամացն սովոյ. զորս ծնաւ նմա Ասանէթ դուստր Փետափրեայ քրմի Արեգ քաղաքի: * Եւ կոչեաց Յովսէփ զանուն անդրանկանն Մանասէ. զի ասէ թէ մոռացոյց ինձ Աստուած զամենայն զվիշտս իմ, եւ զամենայն վիշտս հօր իմոյ: * Եւ զանուն երկրորդին կոչեաց Եփրեմ, զի ասէ թէ աճեցոյց զիս Աստուած յերկրի տառապանաց իմոց:

* Եւ անցին եւթն ամք լիութեանն, որ եղեն յերկրին եգիպտացւոց: * Եւ սկսան գալ եւթն ամք սովոյն. որպէս ասաց Յովսէփ: Եւ եղեւ սով յամենայն երկրին. զի յամենայն երկրին եգիպտացւոց ոչ գտանէր հաց: * Եւ սովեցաւ ամենայն երկիրն եգիպտացւոց: Եւ աղաղակեաց ամենայն ժողովուրդն առ Փարաւոն վասն հացի: Եւ ասէ Փարաւոն ցամենայն եգիպտացիսն, երթայք առ Յովսէփ, եւ զոր ինչ ասիցէ ձեզ արասջիք: * Եւ էր սով 'ի վերայ երեսաց ամենայն երկրի: Եւ եբաց Յովսէփ զամենայն շտեմարանս ցորենոյ. եւ վաճառէր ամենայն

[Genèse, XLI, 48—56].

եգիպտացւոցն։ Եւ սաստկացաւ սովն յամենայն երկիրն եգիպտացւոց։ * Եւ ամենայն աշխարհք գային յԵգիպտոս գնել 'ի Յովսեփայ. զի զօրանայր սովն ընդ ամենայն երկիր։

II. ORIGINE DES ARMÉNIENS. — HAÏK.

Յետ ջըրհեղեղին որդիքն Նոյի Յաբեթ, Սեմ և Քամ՝ բնակեալք յաշխարհն Արարատայ՝ սերեցան որդւոց յորդիս. և բազմացան անդ յոյժ։ Ապա առեալ Սեմայ զորդիս իւր՝ չուեաց ընդ արևմուտս հիւսիսոյ՝ գտանել իւր բնակութիւն. և հասեալ առ երկայնանիստ լերամբ 'ի դաշտ մի՝ ընդ որ գետ անցանէր, դադարեցաւ առ գետովն ամիսս երկու. և զլեառն՝ առ որով նստաւ, կոչեաց յանուն իւր Սիմ։ Զայն երկիր տուեալ միում 'ի կրտսերագոյն որդւոց իւրոց, որում անուն էր Տարբան, դարձաւ անդրէն յարևելս հարաւոյ՝ ուստի եկեալն էր, գտանել զայլ ևս պատշաճաւոր տեղի այլոց որդւոց իւրոց։ Իսկ Տարբան մնացեալ անդ հանդերձ ուստերօք և դստերօք և արամբք նոցին, կոչեաց զգաւառն զայն յանուն իւր Տարօն. և աշխարհն կոչեցաւ յետոյ Տուրուբերան։ Բաժանեաց ապա զորդիս իւր յայլևայլ տեղիս այնր գաւառի. յորմէ և տեղին այն կոչեցաւ Ցրօն, այսինքն ցրուումն կամ բաժանումն.

Այնպէս և որդիք Քամայ և Յաբեթի բազմացեալ յորդիս՝ սփռեցան յերեսս այնր աշխարհի յայլևայլ գաւառս 'ի մեծն Հայաստան. որդիքն Քամայ զսահմանօք արևմտից. և որդիքն Յաբեթի զսահմանօք լերինն Մասեայ. և ամենայնցն նոցա էր մի լեզու և մի բարբառ, և որպէս հաւանական թուի այն էր լեզու Հայոց. Եւ ծնաւ Յաբեթ զԳամեր. և Գամեր ծնաւ զԹորգոմ, և զԱսքանազ. և Թորգոմ ծնաւ զՀայկ. յորմէ և ազգ մեր Հայք: Իսկ Հայկ ըստ ստուգաբանութեան նշանակէ հայրիկ, այսինքն մի միայն առաջին հայր սերնդոց իւրոց՝ որք ասին Հայք: Զայս եղեալ՝ մատիցուք 'ի հարազատ պատմութիւն մեր սկսեալ 'ի Հայկայ:

Հայկ որդի Թորգոմայ՝ որդւոյ Գամերի որդւոյ Յաբեթի անդրանկանն Նոյի առ կենդանութեամբ նորա բնակեալ 'ի Հայաստան՝ որպէս և այլք առ հասարակ, իբրև եղև Ղ̄ ամաց, կամ ըստ եօթանասնից ՃՂ̄ ամաց, 'ի բաժանիլ բնակչաց երկրին և 'ի չուել նոցա հանդերձ որդւովք և ազխիւք իւրեանց յարա-րատեան աշխարհէ յերկիրն Սենաար 'ի Միջագետս, ինքն ևս գնաց ընդ նոսա.

Ընդ 'ի շինել նոցա զաշտարակն 'ի Բաբելոն, և 'ի խառնակիլ լեզուաց, և 'ի տիրել Բէլայ 'ի վերայ ամենեցուն, և 'ի կանգնել նորա զՆինուէ քաղաք, եկաց Հայկ յայնոսիկ կողմանս առանձին տամբ իւրով զամս ոչ սակաւ ընդ իշխանութեամբ նորին Բէլայ.

ուր և ծնաւ զորդիս բազումս, զԱրմենակ, զՄանաւազ, զԽոռ և զայլս, և բազմացաւ յոյժ։

Ապա ոչ ևս կամելով հպատակել ընդ ձեռամբ Բելայ՝ առեալ զորդիս և զթոռունս իւր, որոց թիւ հաշուի լինել իբր երեքհարիւր, ևս և զընդոծինս, և զայլ բազումանձինս որք յարեցան 'ի նա, ել յաշխարհէն Բաբելոնի հանդերձ ամենայն աղխիւք. և խաղաց 'ի կողմն հիւսիսոյ գնալ յերկիրն Արարատայ. և եկեալ 'ի դաշտավայր մի բնակեցաւ 'ի լեռնոտին միում։ Գտեալ անդ Հայկայ զբազում մարդիկ՝ որք յառաջագոյն սփռեալ դադարէին յայն տեղիս, և խօսէին 'ի լեզու Նոյայ՝ հնազանդեցոյց զնոսա ընդ իւրև։ Եւ զի իւր նախնի լեզու էր նոցայն՝ 'ի լեզու նոցա միայարեցաւ։ Եւ շինեալ անդէն զդաստակերտս՝ ետ 'ի ժառանգութիւն թոռին իւրում Կադմեայ որդւոյ Արմենակայ։

Եւ ինքն այլով աղխիւն խաղաց յարևմուտս հիւսիսոյ. և եկեալ բնակեցաւ 'ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանեաց զանուն տեղւոյն Հարք, աւանդել կամելով յետնոց իւրոց յիշել թէ անդ զառաջինն բնակեցան հարք այնր ազգի սերեալք 'ի տանէ Թորգոմայ։ Ապա կառոյց անդ յիւր անուն աւան, և կոչեաց Հայկաշէն. և որք միանգամ բնակեալ էին 'ի հարաւակողմն այնր դաշտի, և ըստ նախագրելոյդ խօսէին 'ի նոյեան լեզու, նոքա ևս նիքնակամ հնազանդեցան նմա։

Իսկ Բէլ առեալ զլուր վտարանջելոյն Հայկայ, առաքեաց առ նա զմի. ոմն յորդւոց իւրոց հաւատարիմ արամբք գալ 'ի հնազանդութիւն: Այլ Հայկ խստութեամբ պատասխանեալ դարձոյց յետս զպատգամաւորսն: Բարկացաւ ընդ այս Բէլ. և զօրաժողով լեալ եկն յերկիրն Հայկայ՝ մօտ 'ի սահմանս Կադմեայ թոռին նորա: Իսկ Կադմոս զահի հարեալ յերեսաց նորա՝ առաքեաց արս փութանակի առ Հայկ, և ծանոյց նմա զյարձակելն Բելայ. յայտ լիցի ասէ մեծիդ դիւցազանց, զի դիմեալ գայ 'ի վերայ քո Բէլ բազմութեամբ քաջաց և հսկայից. և ես իբրև գիտացի թէ մերձեցաւ 'ի սահմանս իմ, առաքեցի ծանուցանել քեզ զգալուստ նորա. և արդ փութասջիր խորհել՝ թէ զի՞նչ ունիցիս առնել: Իսկ ինքն Կադմոս խուճապեալ էառ զընտանիս իւր, և եկն առ Հայկ տագնապաւ:

Իսկ Բէլ վստահացեալ 'ի բազմութիւն արանցն՝ որք ընդ նմա, և 'ի զօրութիւն իւր, իբրև զյորձանս սաստիկ հեղեալ՝ փութայր հասանել հետևակօք 'ի սահմանս բնակութեանն Հայկայ: Այլ արին Հայկ անձապարեալ՝ հաւաքեաց զորդիս և զթոռունս իւր արս քաջս և հզօրս, հաստաբազուկս և կորովիս, և զայլս ևս՝ որք էին ընդ ձեռամբ իւրով ամենեքին աղեղնաւորք թէպէտև թուով սակաւք. և եհաս յեզր ծովակի միոյ, որոյ ջուրք էին աղի և ձկունք մանր. այն է Վանայ ծով: Ընդ սակաւ մի զտեղի առեալ՝ քաջալերեաց զորս ընդ իւր էին, և ասէ. 'ի

հանդիպել մեր գնդին Բելայ՝ դիմեսցուք յայն կողմն ճակատուն նորա՝ ուր լիցի նա ինքն Բէլ. և զյաջողութիւն մատանց մերոց ցուցեալ հարցուք զնա, և ցրուեսցուք զթիկնապահս նորա. և մեր եղիցի յաղթութիւն. ապա թէ ոչ յաջողեսցի մեզ՝ մեռցուք քաջութեամբ, և ամենայն ինչ մեր 'ի ծառայութիւն Բելայ մնասցէ:

Եւ ապա անցեալ յառաջ 'ի միասին՝ եկին 'ի միջոցս դաշտաց և լերանց. և հանդարտեցին անդ 'ի բարձրաւանդակի միում՝ որոյ յաջմէ խոսէին ջուրք: Անտի հայեցեալ տեսին 'ի հեռուստ զի բազմութիւնք զօրացն Բելայ իբրև զմրրկայոյզ ամպս թխպագին դիմեալ գային յանդուգն յարձակմամբ:

Եւ ինքն Բէլ յամբոխէ անտի իւրմէ զատուցեալ ընտիր արամբք՝ հասանէր 'ի բլուրն, որ կայր 'ի հանդիպոյ 'ի ձախմէ ջուրց. և անտի իջեալ խաղայր 'ի վերայ Հայկայ: Եւ էր նա ագուցեալ 'ի գլուխ իւր սաղաւարտ երկաթի զարդս ունելով 'ի գագաթան. և տախտակ պղնձի 'ի վերայ լանջաց և թիկանց. և պահպանակ զրահից 'ի բազուկս և 'ի բարձս ոտից. գօտի ընդ մէջ, և սուր երկսայրի յագդեր իւրում. Նիզակ մեծ յաջ ձեռին, և վահան 'ի ձախոյ. յերկուց կողմանց նորա եւս վաղակաւորք և նիզակաւորք քաջք:

Զայն տեսեալ Հայկայ՝ փութացաւ. և կարգեաց յաջմէ իւրմէ զԱրմենակ երկու եղբարբք, և 'ի ձախմէ իւրմէ զԿադմոս, և զայլ երկու որդիս իւր ընդ նմա. զի էին նոքա արք հզօրք, և ինքն առաջի, և զայլս զկնի եռանկիւնի իմն ձևով: Եւ եղև իբրև պատա-

հեցան միմեանց կողմանքն երկոքին, դղրդիւն իմն ահագին լինէր անդ. և 'ի հարկանել զիրեարս սաստիկ՝ բազումք անդէն տապալ յերկիր կործանէին և մեռանէին. և մարտն մնայր անպարտելի:

Զայսպիսի անակնունելի ելս տեսեալ Բելայ՝ զարհուրեցաւ յանձն իւր. և նահանջեալ յետս՝ խորհէր և փութայր ելանել 'ի բլուրն յայն՝ ուստի իջեալն էր. որպէս զի անդ իբր յապահովի ամրացեալ՝ սպասեսցէ գալստեան բովանդակ զօրուն՝ յորմէ անջատեալն էր. և ինքն միւսանգամ ճակատ յարդարեսցէ:

Բայց քաջն Հայկայ իմացեալ զայս՝ յառաջ վարեաց զանձն, և ընթացաւ 'ի վերայ նորա. և քարշեալ զաղեղն պինդ՝ ձգեաց և թռոյց զնետն երեքթևեան 'ի նա ուժգնակի. և նետն անցեալ ընդ պղնձի տախտակ կրծոցն՝ ել ընդ մէջ թիկանցն և անկաւ յերկիր. և Բէլ անդէն կործանեալ և թաւալեալ մեռաւ 'ի հասակի երեքհարիւր ամաց. և ամբոխն՝ որ ընդ նմա տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն Հայկայ, ցրուեցան անտի, և փախեան:

Իսկ Հայկ առեալ զաւար անկելոցն, և կանգնեալ անդէն զդաստակերտ՝ կոչեաց զտեղի պատերազմին Հայք. զի անդ ցուցին Հայք զքաջութիւն իւրեանց. և զտեղին ուր անկաւ Բէլ՝ անուանեաց Գերեզմանք: Հրամայեաց ապա պատել դեղովք զդին Բելայ, և տանել 'ի Հարք, և թաղել 'ի բարձրաւանդակ տեղւոջ 'ի նշան իւրոյ քաջութեան: Նա ապա տուեալ Կադմեայ

բազում ինչ յաւարէ անտի, ևս և արս հզօրս, պատուիրեաց նմա գնալ 'ի տեղի իւր: Եւ ինքն դարձ արարեալ 'ի Հարք գաւառ՝ հաստեաց յաշխարհի անդ միապետական իշխանութիւն իւրում ազգի: Վասն այսր գործոյ՝ զոր գործեաց Հայկ, կոչէ զնա Վարդան 'ի Հնախօսութենէ Մխիթարայ անեցւոյ «աստուածային փառաց նախանձախնդիր». զի ոչ պաշտելով ասէ զպատկերն Բէլայ, սատակեաց զնա իբր զատաջնորդ կռապաշտութեան:

Ըստ Մարիբասայ գրելոյն Մովսէս խորենացին կոչէ զՀայկ՝ դիւցազն, գեղապատշաճ, քաջագանգուր, խայտակն, անձնեայ, հաստաբազուկ, հաստաղեղն, կորովաձիգ, ուշեղ, խոհեմ և քաջ: Եւ կարի յիրաւունս, զի ըստ այսոցիկ հանգամանաց անձին յամենայնի քաջութիւնս ցուցեալ երևի արիս այս Հայկ. մանաւանդ 'ի յաղթանակել նորա մեծին այն Բէլայ, և 'ի նուաճել ընդ իւրև զայլս:

Այն սա յետ բազում արիական գործոց և քա՛ղաքական կարգաց, և աշխարհի շինութեանց, և հիացուցիչ հանդիսից՝ որպէս գրէ Գրիգոր մագիստրոս, և Յովհան կաթուղիկոս, կեցեալ ամս ոչ սակաւ՝ մեռաւ հանգստեամբ յիւրում աշխարհի, յանձն առնելով Արմենակայ որդւոյ իւրում զազգ իւր բովանդակ:

III. L'ÉVÊQUE JEAN.

Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմտութեանն և շաղաշուտ խօսիցն և գործոցն, և նշանացն՝ որ յԱստուծոյ ՚ի վերայ նորա եղեն.

Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի, հինաւուրց. Թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Նա էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգահանդերձս. մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեսկով պատէր, և զձմեռն կեմով: Նա յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Աստուծոյ. այնչափ ինչ, զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ ՚ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ՚ի գրաստու վերայ և գայր. եկ դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ՚ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն. լուացեալ զհերս իւր օծեալ մերձեալ, վարսակալ եդեալ ՚ի գլուխ իւր, և օձիկ արկեալ զուսովք իւր. և գայր զճանապարհս իւր. Թերևս յաւազակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի ՚ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝

անկկառոյց լինէր։ Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ 'ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. Իջ դու վաղվաղակի 'ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ։ Ասէ այրն. Զի ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ։ Մանաւանդ զի այրն արբեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել 'ի ձեոյն։ Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց 'ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի 'ի ճանապարհէն։ Եւ առնն խոնարհեալ հրամայէր և ասէր. Զերի-ցութեան ձեռն դնեմ 'ի վերայ քո։ Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ 'ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ 'ի նմին գործ կամ։ Եւ շատ 'ի վէգ եկեալ յամառէր այրն, և նա ևս չար քան զնա։ Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաբողոն։ Եւ ասէր. Երթ 'ի գեւղ քո, և լիջիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես։ Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ. ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ։ Իսկ այրն յամառեալ 'ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, և

զայրն արձակեաց։ Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն։

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէքողոն առկեալ, գնայր 'ի տուն իւր, և երթեալ մտանէր 'ի մէջ ընդանեաց իւրոց, ասէ ցկին իւր և ցընդանիս. Արիք յաղօթս կամք։ Եւ նոքա ասեն. Մո՞լիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ 'ի քեզ։ Իսկ նա ասէ. Արիք կամք յաղօթս, վասն զի երէց եմ։ Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա։ Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երախայ էիր, և չէիր մկրտեալ։ Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց, չետ յիշել, և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և զձին սանձաւ թամբաւ առ և անց։ Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց։ Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց։ Եւ ասէ Յոհան. Սափորով մեծ ջուր բերէք։ Եւ առեալ զջուրն էարկ զգլխով նորա, և ասէ. Երթ, մկրտեցի զքեզ։ Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ։

Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն. և էր ժամանակն զայգին յատելոյ։ Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, և ասէ. Օրհնեա, տէր եպիսկոպոս, զմեզ և զայգիս։ Ասէ Յոհան.

Փուշ և տատասկ բուսցի։ Ասէ այրն. Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ։ Եւ եղեն նշանք յԱստուծոյ. զի իբրև չոգաւ եպիսկոպոսն 'ի վանս իւր, հասին հարուածք 'ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել։ Եւ մեծապէս շտապեալ անկեալ 'ի տանջանս չարաչարս հարուածոց, և 'ի մեծ տագնապի կայր աւուրս բազում։ Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգործն, աղաչեաց զնա առնել 'ի վերայ նորա աղօթս, զի փրկեսցի նա 'ի ցաւոցն։ Այգործն ասէր. Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել. Թող թէ զայր եպիսկոպոս. Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ. մինչև յառնէր այգործն կայր յաղօթս և ասէր. Տէր Աստուած, դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան, ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս. դու փրկեա զիս յայս 'ի չարէս, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն՝ քո բանիւ եղև։ Զի լաւ էր ինձ մահ. քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն։ Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոցն փուշն 'ի բաց թափել. և էր իբրև զփուշ խոտոց. վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն։

Այն Յոհան եպիսկոպոս որդի Փառինայ յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղակատակ լինէր նոցա. որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր,

սակայն մեհանէսք այն էին նորա։ 'Ի չորս անկեալ յոտս և 'ի ձեռս սողէր առաջի Թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով։ Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր 'ի ձայն կառաչելոյն, ասելով Թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք 'ի վերայ իմ զմեղս արքայի, Թող բառնամ։ Իսկ Թագաւորքն զմուրհակս գիւղից կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին 'ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և 'ի Թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղս բառնալոյ ըստ բանիցն։ Այսպիսի էր այրս Յոհանս կապեալ յըռժգուԹեան և յագահուԹեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահուԹեան, որ չէր արժան։

IV. S. MESROB CRÉE L'ÉCRITURE ARMÉNIENNE ET TRADUIT LA BIBLE.

Զ տաքանազեան ազգին և զՀայաստան աշխարհիս զաստուածատուր շնորհս, զգրոյն գիւտ, և զվարդապետուԹեանն պարգեւ 'ի տեառնէ տուեալ, Թէ յորում ժամանակի և որպիսի արամբ լուսաւոր վարդապետուԹեամբ պատմեսցուք ձեզ, և զնորին հրեշտակակրօն վարս առաքինուԹեան։

Էր այրս այս Մեսրովբ 'ի Տարաւն գաւառէ, 'ի Հացեկաց գեղջէ, որդի Վարդանայ. 'ի մանկութեան ուսեալ վարժեալ հելլենացւոց դպրութեամբն, և եկեալ 'ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայատուր հրամանին: Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց 'ի զինուորական կարգս և յառաջադէմ՝ և սիրելի էր ամենեցուն մեծամեծաց և փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն.

Յետ այսորիկ 'ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զամենայն զբաղմունս, և առեալ զխաչն ըստ աւետարանական հրամանին ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի: Եւ հաճեալ զհրամանաց պայման, 'ի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառնի. և զկրօնս միանձանց յանձն առեալ յաւէտ կրօնաւորէր: Եւ բազում և ազգի ազգի վշտակեցութիւն(1) *ըստ աւետարանին կրէր. և ամենայն կրթութեան հոգեւորացն զանձն տուեալ կրօնաւորէր 'ի քաղց և 'ի ծարաւ, 'ի ցուրտ և 'ի մերկութիւն. խստաքուստ եղեալ, խարազնազգեստ և գետնատարած անկողնօք. և զհանգիստ քնոյ գիշերոյ յոտնաւոր տքնութեամբ 'ի թօթափել ական վճարէր բազում անգամ. և*

---

(1) L'édition de Venise, 1854, a ici *վշտակցութիւն*, *sympathie, compassion;* il faut lire évidemment *վշտակեցութիւն*, *peines, misères, épreuves.*

զայս առնէր ոչ սակաւ ժամանակս. Նա զտեալ զոմանս զգաստասէրս յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աստուածական կրօնաւորութեանն: Նա ամենայն փորձութեանց 'ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ, և նովիմբ լուսաւորեալ և պայծառացեալ 'ի հանդէս ճգնաւորական հանգոյ Աստուծոյ և մարդկան երևեալ:

Առեալ այնուհետև երանելւոյն զաշակերտեալսն իւր՝ երթայր 'ի Գողթն. ուրում ընդ առաջ լինէր իշխանն Շաբիթ, և սիրով ընդունէր որպէս զծառայ Աստուծոյ բարձրելոյ. և բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հաւատոցն 'ի Քրիստոս: Իսկ երանելւոյն անդէն վաղվաղակի զվարդապետական շնորհս 'ի մէջ առեալ, ուսուցանէր զբնակիչս քաղաքին և գաւառին, կամաւ իշխանին մատակարարութեամբ: Զի էր ինչ 'ի նոսա 'ի հեթանոսական սովորութեանցն, զորս դարձուցանէր 'ի գիտութիւն ճշմարտութեան, և զամենեսեան լուսաւորէր շնորհաց բանիւն: Յորոյ 'ի ձեռն մեծամեծ սքանչելիք երևեալ, դիւաց՝ կերպ 'ի կերպ լինելով զաղաղակ բարձեալ յամենեցուն լսելիս հնչեցուցանէին զհալածանս իւրեանց, անկանելով 'ի կողմանս Մարաց: Վասն որոյ առաւել ունկնդիր լինէին աշակերտեալքն հոգեկրօն վարդապետին, վասն հաւատոց և վարուց որ նոցա աւանդեցաւ 'ի սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի գրովք սրբովք:

Բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն առ

աշակերտեալսն. իսկ երանելի վարդապետն տարա-կուսեալ 'ի խորհուրդս իւր՝ առ Աստուած ապաւինէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր հայ լեզուիս, որով նուազութիւնն յառաւելութիւն գայցէ գրով: Եւ յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբն Սահակ հայրապետն Հայոց յաղագս գրոյ նշանագրաց. եգիտ զնա առաւել եւս փափաքող այնմ: Եւ յետ բազում ջանից եւ աշխատութեանց եւ ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինելով յԱստուծոյ խնդրէին որում ցանկային: Եւ մեկնեալ 'ի միմեանց, եւ յանձն առեալ զխստամբերութիւն՝ ճգնէին առաւել քան զառաւելս:

Եւ յետ այսորիկ ծանուցեալ լինէր 'ի Թագաւորէն Վռամշապհոյ, որ եւ նա այսմ նախանձայոյզ եղեալ, առաքեն զՄեսրովբ աշակերտօքն հանդերձ 'ի Միջագետս Ասորւոց: Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց համբաւէր գիտութիւն: Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւոց առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել զնշա-նագիրս որում ցանկայրն: Եւ յետ բազում աշխա-տութեանց եւ քննութեանց եւ ուսմանց անշահ մնացեալ. զի ոչ բերէր զբառս եւ զբանս ալփաբետացն ըստ հայերէն լեզուիս:

Յայնժամ հաւատով առ Աստուած ապաւինի, եւ աղօթս արտասուալիցս առ Աստուած մատուցանէր, եւ հայցէր յամենեցունց տեառնէն զտիւ եւ զգիշեր ցուցանել զփափաքելին նշանագրաց: Եւ տեսանէր

ոչ 'ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ 'ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, գրելով 'ի վերայ վիմի. զի որպէս 'ի ձեան վերջք գծին ունէր քարն. և ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնից՝ որպէս յամանի 'ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթից եստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Ռուփինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ 'ի Սամոս էր միայնակեաց. կերպաձեւեալ զգիրն ըստ հրամանի Մեսրովբայ վարդապետին և երանելւոյ. փոխագրելով ըստ հայերէն ըստ անսայթաքութեան սիղոբայից հելլենացւոց.

Եւ իսկոյն 'ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակեալ զքսան և երկուց յայտնիւն, զհին կտակարանսն յեղուլ 'ի հայ բան։ Եւ աշակերտք նորա Յովհան և Յովսէփ 'ի նոյնս նպաստ լինէին։ Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտաց։

GLOSSAIRE

Ա

ագահ, ի, աւ, *a.* avare.
ագահութիւն, *s.* avarice.
ագանիլ, իմ, ագայ, *v. i.* s'habiller, se chausser.
ագարակ, ի, աւ, *s.* village, champ.
ագուցանել, եմ, գուցի, *v. t.* habiller, vêtir.
ազազուն, *a.* sec, desséché.
ազգ, ի, աւ, *s.* nation, peuple, famille; genre, espèce; ազգի ազգի, de tout genre.
ազդր, դեր, դերք, *s.* hanche, cuisse.
ազն, զին, զամբ, *s.* nation, peuple, race.
ազնիւ, նուի, նուաւ, *a.* noble, distingué.
աթոռ, ոյ, ով, *s.* siége, trône.
ալփաբետք, տաց, տօք, *s.* alphabet.
ախտ, ի, իւ, *s.* mal, maladie.
ածել, եմ, ածի, *v. t.* amener, porter, produire.
ակն,ական, ակամբ, *pl.* ակունք, *s.* œil.
ակնկառոյց, *a.* qui fixe ses regards sur, qui a les yeux attachés sur.
ահ, ի, իւ, *s.* crainte, épouvante; զահի հարկանել, être frappé d'épouvante.

ահա, *adv.* voici.
ահագին, *a.* terrible, effroyable.
ահաւասիկ, *adv.* voici.
աղ, ի, իւ, *s.* sel.
աղաբողոն, ի, աւ, *s.* pallium, manteau d'ecclésiastique.
աղագ, ի, աւ, *s.* raison, cause, v. յաղագս.
աղաղակ, ի, աւ, *s.* cri, clameur, voix.
աղաղակել, *v. i.* crier.
աղաչել, եմ, եցի, *v. t.* prier, supplier.
աղեղն, ղան, ղամբ, *s.* arc.
աղեղնակապարճ, ի, իւ, *s.* carquois.
աղեղնաւոր, ի, աւ, *s.* archer, homme habile à tirer de l'arc.
աղէպողոն, v. աղապողոն.
աղի, աղւոյ, *a.* salé.
աղխ, ի, իւ, *s.* bagages, biens.
աղմուկ, մկի, մկաւ, *s.* trouble, situation embrouillée.
աղօթք, թից, թիւք, *s.* prières.
աճապարել, եմ, եցի, *v. i.* se hâter.
աճել, եմ, եցայ, *v. i.* croître, augmenter, grandir.
աճեցուցանել, եմ, ցուցի, *v. t.* faire croître, agrandir.
ամ, ի, աւ, *s.* année.
աման, ոյ, ով ou ի, աւ, *s.* vase.
ամառն, րան, րամբ, pl. ամարունք, *s.* été.
ամբոխ, ի, իւ, *s.* troupe.
ամենակեցոյց, *a.* qui vivifie, qui sauve tout le monde.
ամենայն, ի, իւ, *pr. coll.* tout, tous [50].
ամենեքեան, ամենեքին, *pr. coll.* et *s.* tous, tous les hommes; pl. irr. de ամենայն [50].
ամիս, մսոյ, ով, *s.* mois.
ամպ, ոյ ով, *s.* nuée.
ամրանալ, ամ, րացայ, *v. i.* se fortifier.

այգի, *գւոյ*, *գեաւ*, *s.* vigne.
այգորդ, *ի*, *աւ*, *s.* vigneron.
այդ, *այդր*, *այդմ*, etc. [43] *pr. dém.* ce, celui-là, cela.
այդպիսի, *սւոյ*, *սեաւ*, *pr. corr.* tel, pareil [51].
այժմ (pour *այս ժամ*), *adv.* maintenant [90].
այլ, *այլոյ*, *այլում*, *յայլմէ*, *pr. coll.* autre (*alius*).
այլ, *conj.* mais.
այլեւայլ, *a.* divers.
այծ, *ի*, *ից* et *այծի*, *ծւոյ*, *ծիք*, *ծեաց*, *s.* chèvre.
այն, *այնր*, *այնմ* etc. [43] *pr. dém.* ce, celui-là, cela.
այնուհետեւ, *adv.* ensuite, après cela.
այնչափ, *pr. corr.* tel, de telle mesure; *adv.* tellement [51].
այնպէս, *adv.* ainsi, de cette façon.
այնպիսի, *սւոյ*, *սեաւ*, *a.* tel, pareil.
այս, *այսր*, *այսմ* etc. [43] *pr. dém.* ce, celui-ci, ceci.
այսինքն, *adv.* savoir, c'est à dire [48].
այսպէս, *adv.* ainsi, de cette manière.
այսպիսի, *սւոյ*, *սեաւ*, *a.* tel, de telle manière.
այսօր, *adv.* aujourd'hui.
այտի, *adv.* de là [90].
այր, *առն*, *արամբ*, *արք*, *s.* homme, mari [28].
անակնունելի, *a.* inopiné, inattendu.
անապատ, *ի*, *աւ*, *s.* désert.
անարժան, *ի*, *իւ*, *a.* indigne.
անգամ, *adv.* fois, coup; encore, même; *բազում անգամ* souvent, à mainte reprise.
անդ, *ի*, *իւ*, *s.* champ, campagne.
անդ, *adv.* là [89].
անդամ, *ոյ*, *ով*, *s.* membre, partie.
անդէն, *adv.* là; aussitôt.
անդր, *adv.* là [90].

անդրանիկ, նկի et նկան, նկաւ, *s.* et *a.* aîné, premier-né.
անդրէն, *adv.* de nouveau, une autre fois.
անեցի, ցւոյ, *a.* d'Ani (Անի), ville capitale de l'Arménie sous la dynastie des Bagratides.
անիծանել, եմ, ծի, *v. t.* maudire.
անկանիլ, իմ, անկայ, *v. i.* tomber, s'échapper, s'enfuir.
անկիւն, կեան, կեամբ, *s.* angle, coin.
անկողին, gén. pl. ղնոց, ղնից ou ղնաց, *s.* lit, couche.
անձն, ձին, ձամբ, *s.* âme, personne; *souvent employé comme pronom défini*, lui-même, soi-même, etc. [48]; զանձնէն, au sujet de sa propre personne; յանձն առնել, recommander, confier.
անձնեայ, նէի, նէիւ, *a.* fort, aux membres vigoureux.
անմտութիւն, *s.* folie, sottise, insanité.
անշահ, ի, իւ, *a.* inutile; qui ne gagne rien, qui n'obtient pas de résultat.
անուանել, եմ, եցի, *v. t.* nommer.
անուն, նուան, նուամբ, *s.* nom [14].
անպարտելի, *a.* invincible, indécis (en parlant d'un combat).
անջատել, եմ, եցի, *v. t.* séparer.
անսալ, ամ, սացի, *v. i.* écouter, consentir, obéir.
անսայթաքութիւն, *s.* rectitude, fermeté, infaillibilité.
անտի, *adv.* de là [90].
անցանել, եմ, անցի, *v. i.* passer, marcher, s'en aller.
աշակերտ, ի, աւ, *s.* disciple, sectateur.
աշակերտական, *a.* de disciple, qui convient à un disciple.
աշակերտել, եմ, եցի, *v. t.* avoir pour disciple, instruire; IV. être disciple de quelqu'un, le suivre.
աշխատիլ, իմ, եցայ, *v. i.* fatiguer, travailler.
աշխատութիւն, *s.* fatigue, travail, labeur.

աշխարհ, ի, աւ, *s.* monde, terre, contrée, pays.
աշխարհական, ի, աւ, *a.* qui appartient au monde, laïque.
աշխարհակեաց, *a.* séculier, temporel, civil.
աշտարակ, ի, աւ, *s.* tour.
աչք, աչաց, աչօք, *s.* les yeux.
ապա, *adv.* puis, ensuite.
ապականել, եմ, եցի, *v. t.* corrompre, gâter.
ապահով, ի, իւ, *a.* sûr, assuré; յապահովի, *adv.* en sûreté, à l'abri.
ապաստ, *s.* habitation, lieu habité.
ապաւինիլ, իմ, եցայ, *v. i.* se confier à, recourir à.
ապաքէն, *conj.* certes, sans doute; ո՞չ ապաքէն, n'est-ce pas?
ապշիլ, իմ, շեցայ, *v. i.* être étourdi, surpris, stupéfait.
ապշեցուցանել, եմ, ցուցի, *v. t.* étourdir, surprendre, frapper de stupeur.
ապուշ, *a.* hors de sens, stupide, hébété, surpris [91].
աջ, ոյ, ով [21], *a.* et *s.* droit; droite, main droite; յաջմէ, à droite.
աջողակ, ի, աւ, *a.* adroit, propice, prospère (aussi յաջողակ).
առ, *prép.* à, vers, pour, *accus.*; chez, près de, *gén.*, *instr.*; durant, pendant, *instr.*; առ 'ի, de, d'auprès de, de la part de.
առակ, ի, աւ, *s.* proverbe.
առանձին, *a.* particulier, singulier, isolé.
առանց, *prép.* sans, excepté, *gén.*
առաջ, ոյ, *s.* front, tête, devant; ընդ առաջ, au devant; v. յառաջ, յառաջագոյն.
առաջի, *prép.* devant, *gén.*; *adv.* en avant.
առաջին, ջնոյ, ջնով, *a.* premier, primitif, antérieur; v. զառաջինն.

առաջնորդ, ի, աւ, *a.* et *s.* auteur, créateur, chef.
առաջնորդել, եմ, եցի, *v. n.* diriger, conduire, commander.
առաւել, *adv.* plus, davantage; առաւել քան զառաւելս, de plus en plus.
առաւելութիւն, *s.* accroissement, abondance.
առաւօտ, ու, ու, *s.* matin; ընդ առաւօտ, le matin.
առաքել, եմ, եցի, *v. t.* envoyer, mander.
առաքինի, նւոյ, նեաւ, *a.* vaillant, vertueux.
առաքինութիւն, *s.* valeur, vertu.
առն, gén. de այր.
առնել, եմ, արարի, *v. t.* faire [88].
առնուլ, ում, առի, *v. t.* prendre, accueillir, recevoir, occuper; յանձն առնուլ, prendre sur soi, s'adonner à; չառնուլ յանձն, refuser; 'ի մէջ առնուլ, mettre en avant, proposer, présenter; խորհուրդ 'ի մէջ առնուլ, concevoir une pensée.
Ասանէթ, *n. pr.* Assaneth, femme de Joseph.
ասել, եմ, ասացի, *v. t.* dire, promettre [63].
Ասորի, րւոյ, րւով, *a.* Syrien.
աստ, *adv.* ici, ici-bas, dans ce monde [89].
աստի, *adv.* ici, d'ici [90].
աստիք, տեաց, *s.* le monde, les choses mondaines.
աստղ, տեղ, տեղք, *s.* étoile [26].
Աստուած, տուծոյ, ով, *s.* Dieu.
աստուածային, այնոյ, ով, *a.* divin.
աստուածատուր, տրոյ, տրով, *a.* donné par Dieu.
Ասքանազ, *n. pr.* Askanaz, fils de Gomer.
ասքանազեան, *a.* Askanazien, de la race d'Askanaz, un des noms du peuple arménien.
ատել, եմ, եցի, *v. t.* haïr, détester.
ատոք, ի, աւ, *a.* plein, gras.

արածել, եմ, եցի, *v. t.* mener paître, garder (les troupeaux); IV. *v. i.* paître.

Արարատ, այ, *n. pr.* Ararat.

արարատեան, *a.* d'Ararat; arménien.

արարի, 1e p. aor. II de առնել.

արբեալ, ելոյ, ով, *a.* ivre.

արբի, aor. II de ըմպել.

արդ, *adv.* maintenant.

արդիւնք, դեանց, դեամբք, *s.* produits, récoltes.

արեգ, ի, իւ, *s.* soleil; Արեգ քաղաք, ville du soleil, Héliopolis.

արեգակն, *s.* et արեւ, ու, ու, *s.* soleil.

արեւելք, լից, լիւք, *s.* orient, levant.

արեւմուտք, մտից, մտիւք, *s.* occident, couchant.

արթնութիւն, *s.* veille.

արթուն, թնոյ, ով, *a.* éveillé, qui ne dort pas.

արժան, ի, իւ, *a.* digne, convenable; արժան է, il convient, il est permis.

արժանի, նւոյ, նեաւ, *a.* digne.

արի, pl. արիք, imp. de յառնել.

արի, րւոյ, րեաւ, *a.* viril, vaillant.

արիական, ի, աւ, v. արի.

արիւն, րեան, րեամբ, *s.* sang.

արկանել, եմ, արկի, 3e p. էարկ, *v. t.* jeter, mettre (un vêtement).

արձակել, եմ, եցի, *v. t.* délier, renvoyer, congédier.

Արմենակ, այ, *n. pr.* Arménak.

արմտիք, տեաց, տեօք, *s.* fruits, produits de la terre.

Արշակ, *n. pr.* Arsace. Արշակունիք, նեաց, les Arsacides.

արուեստ, ի, իւ ou աւ, *s.* art.

արտասուալից, *a.* plein de larmes, éploré.

արտասուք, ւաց, ւօք, *s.* larmes, pleurs.
արտաքս, *adv.* dehors.
արք, pl. de այր.
արքայ, ի, իւ, *s.* roi.
արքայատուր, *a.* donné par le roi, royal.
արքունական, ի, աւ, v. արքունի.
արքունի, *a.* royal.
աւազ, ոյ, ով, *s.* sable.
աւազակ, ի, աւ, *s.* voleur, brigand.
աւազակութիւն, *s.* brigandage.
աւան, ի, աւ, *s.* bourgade, village.
աւանդ, ի, իւ, *s.* dépôt, tradition, transmission.
աւանդել, եմ, եցի, *v. t.* déposer, transmettre, recommander.
աւանիկ (pour ահաւանիկ), *adv.* voilà.
աւար, ի, աւ, *s.* butin, dépouille.
աւետարան, ի, աւ, *s.* Evangile.
աւետարանական, ի, աւ, *a.* évangélique.
աւուր, gén. de օր.

Բ

Բաբելոն, ի, իւ, *n. pr.* Babylone.
բազմանալ, ամ, ացայ, *v. i.* se multiplier, croître en nombre.
բազմութիւն, *s.* multitude.
բազուկ, զկի, զկաւ, *s.* bras.
բազում, զմի, զմաւ, *a.* plusieurs, beaucoup.
բաժակ, ի, աւ, *s.* coupe.
բաժանել, եմ, եցի, *v. t.* partager, diviser, répartir; IV. se séparer.
բաժանումն, նման, նմամբ, *s.* partage, division, séparation.

Բալլա, այ, *n. pr.* Balla, esclave de Rachel.
բայց, *conj.* mais.
բան, ի, իւ, *s.* mot, terme, parole, chose [24].
բանալ, ամ, բացի, 3e p. եբաց, *v. t.* ouvrir.
բանտ, ի, իւ, *s.* prison.
բանտապետ, ի, աւ, *s.* geôlier.
բառ, ի, իւ, *s.* mot, terme.
բառնալ, ամ, բարձի, *v. t.* enlever, lever, élever, porter; partir (= lever la tente).
բարբառ, ոյ, ով, *s.* parole, voix, langage.
բարեպաշտութիւն, *s.* piété, religion.
բարի, բւոյ, բեաւ, *a.* bon; mieux.
բարկանալ, ամ, ացայ, *v. i.* s'irriter, se mettre en colère.
բարձ, ի, իւ, *s.* coussin; բարձք, ձից et բարձք ոտից, cuisses, jambes.
բարձր, ձու, ձամբ, *a.* haut [26].
բարձրացուցանել, եմ, ցուցի, *v. t.* lever, élever.
բարձրաւանդակ, ի, աւ, *s.* hauteur, colline; *a.* haut, élevé.
բարձրեալ, ելոյ, ով, *a.* Très-haut.
[բաց]; բաց, բաց 'ի, *prép.* excepté, hormis, *abl.* 'ի բաց, *adv.* loin; 'ի բացէ, de loin.
բեհեզ, ոյ, ով, *s.* byssus, fin lin.
բեհեզեայ, *a.* de byssus, de fin lin.
բերան, ոյ, ով, *s.* bouche.
բերել, եմ, բերի, բերեալ, *v. t.* porter, apporter, rapporter.
Բէլ, բէլայ, *n. pr.* Bel, souverain mythologique de la Babylonie.
բժշկել, եմ, եցի, *v. t.* guérir.
բլուր, լրոյ, լրով, *s.* colline.
բնակել, իմ, կեցայ, *v. i.* habiter, séjourner.

բնակիչ, կչի, կչաւ, *s.* habitant.
բնակութիւն, *s.* habitation, demeure.
բովանդակ, ի, իւ, *a.* tout, complet.
բովանդակել, եմ, եցի, *v. t.* achever, compléter.
բուռն, բռան, բռամբ, *s.* poing, main.
բուսանիլ, իմ, բուսայ, *v. i.* croître, pousser.
բուտ, բտոյ, բտով, *s.* nourriture.
բռնաբար, *adv.* violemment, par force [90].
բռնադատել, եմ, եցի, *v. t.* violenter, forcer.

Գ

գագաթն, թան, *s.* sommet de la tête, crâne; cîme, sommet.
գազան, ի, աւ, *s.* bête sauvage, animal.
գալ, ամ, եկի, 3^{e} p. եկն, imp. եկ; fut. II, եկից, եկեսցես, եկեսցէ, etc. [65], *v. i.* venir (dans tous les sens).
գալուստ, լստեան, ստեամբ, *s.* venue, arrivée [15].
Գաղաադ, *n. pr.* Galaad.
Գամեր, ի, *n. pr.* Gomer (Γαμέρ).
գանգուր, գրոյ, ով, *a.* frisé.
գանգուրք, *s.* frisure.
գանձ, ու et ի, *s.* trésor.
գաւառ, ի, աւ, *s.* région, contrée.
գեղ, ոյ, ով, *s.* beauté.
գեղապատշաճ, ի, իւ, *a.* beau, bien fait.
գեղեցիկ, ցկի, ցկաւ, *a.* beau.
գեղջ, gén. de գեւղ.
գետ, ոյ, ով, *s.* fleuve, rivière.
գետին, տնոյ, տնով, *s.* terre, sol.
գետնատարած, *a.* étendu par terre.

գերեզման, ի, աւ, *s.* tombeau. — Գերեզմանք, *n. pr. de lieu.*

գեւղ, գեղջ, գիւղիւ, gén. pl. գիւղից et գիւղաց [29] *s.* village.

գիծ, գծի, իւ, *s.* ligne, raie.

գիշեր, ոյ, ով et ի, աւ, *s.* nuit.

գիտել, եմ, տացի, *v. t.* savoir, connaître [63, 79].

գիտութիւն, *s.* savoir, connaissance.

գիր, գրոյ, ով, *s.* lettre, caractère, écriture, livre. — գիրք, livre, les Ecritures.

գիւղ, v. գեւղ.

գիւտ, ի, իւ, *s.* invention, découverte.

գլուխ, գլխոյ, գլխով, *s.* tête.

գնալ, ամ, ացի, *v. i.* aller, marcher.

գնդի, v. գունդ.

գնել, եմ, եցի, *v. t.* acheter.

գոլ, ոմ, *v. subst.* être, exister [85].

գողանալ, ամ, ացայ, *v. t.* voler.

Գողթն, *n. p.* Goghthen, nom d'un canton d'Arménie.

գոյն, գունոյ, ով, *s.* couleur.

գործ, ոյ, ով, *s.* ouvrage, œuvre, travail.

գործակալ, ի, աւ, *s.* officier, commissaire.

գործարան, ի, աւ, *s.* instrument, organe.

գործել, եմ, եցի, *v. t.* faire, travailler.

գուբ, գբոյ et գբի, գբով, *s.* fosse, citerne.

գունաւոր, ի, աւ, *a.* coloré, de plusieurs couleurs, vif.

գունդ, գնդի, գնդաւ, *s.* troupe.

գտանել, եմ, գտի, 3ᵉ p. եգիտ, *v. t.* trouver, rencontrer [64].

գրաստ, ու, ու, *s.* bête de somme, rosse.

գրել, եմ, եցի, *v. t.* écrire.

Գրիգոր, *n. pr.* Grégoire.

գրիչ, գրչի, չաւ, *s.* écrivain.
գրչութիւն, *s.* écriture.
գօտի, տւոյ, տեաւ, *s.* ceinture.

Դ

դ, *particule démonstrative* [44].

դա, դորա, դմա, դովաւ, etc. [42], *pron. dém.* ce, celui-ci.

դադարել, եմ, եցի, *v. t.* et *i.* arrêter, rester. — IV. s'arrêter, demeurer.

դահեկան, ի, աւ, *s.* denier, drachme.

դահիճ, հճի, հճաւ, *s.* bourreau, exécuteur.

դահճապետ, ի, աւ, *s.* chef des bourreaux, des exécuteurs.

Դանիէլ, ի, իւ, *n. pr.* Daniel.

դաշտ, ի, իւ ou աւ, *s.* champ, campagne.

դաշտավայր, ի, աւ, *s.* plaine.

դառնալ, ամ, դարձայ, *v. i.* se tourner, retourner; դարձեալ ննջեցի, je me rendormis [88].

դաստակերտ, ի, աւ, *s.* construction, maison, village.

դարձ, ի, իւ, *s.* tour, retour; — առնել, retourner.

դարձայ, aor. II de դառնալ.

դարձուցանել, եմ, ուցի, *v. t.* renvoyer, faire revenir, convertir.

դեղ, ոյ, ով, *s.* drogue, épices; պատել դեղովք, embaumer.

դեռ, *adv.* encore.

դև, դիւի, դիւաւ, *s.* divinité (païenne); *de là* démon, diable.

դէմք, դիմաց, դիմօք, *s.* visage, front, face.

դէպք, դիպաց, դիպօք, *s.* rencontre.

դժնդակ et դժընդակ, ի, աւ, *a.* méchant, désagréable.
դժոխ, *a.* dur, rude.
դժոխք, խոց, խովք, *s.* enfer, séjour des morts, tombeau.
դի, ոյ, ով, *s.* cadavre.
դիմել, եմ, եցի, *v. i.* courir, se lancer, se jeter sur.
դիպել, իմ, եցայ (aussi դիպայ, դիպի), *v. i.* se rencontrer, se trouver, arriver.
դիւան, ի, աւ, *s.* chancellerie, archives.
դիւցազն, զին, զամբ, *s.* héros.
դիք, imp. pl. de դնել.
դղրդիւն, *s.* choc.
դնել, եմ, եդի, *v. t.* poser, placer, mettre.
Դովթայիմ, *n. pr.* Dothaïm.
դու, քո, քեզ, 'ի քէն, քև, դուք, ձեր, etc. [40] *pr. pers.* tu, toi.
դուռն, դրան, դրամբ, *s.* porte; cour (d'un roi).
դուստր, դստեր, դստերբ, *s.* fille.
դպիր, պրի, պրաւ, *s.* lecteur, écolier, écrivain.
դպրութիւն, *s.* lettres; littérature.

Ե

եբրայեցի, ցւոյ, ցւով, *a.* hébreu.
եգիպտացի, ցւոյ, ցւով, *a.* égyptien.
Եգիպտոս, ի, իւ, *n. pr.* Egypte.
եգիտ, 3e p. s. aor. II de գտանել.
եդ, 3e p. s. aor. II de դնել.
եզր, զեր, զերբ, *s.* bord, rive.
եթէ, *conj.* si, que; եթէ — եթէ ոչ, si — ou non.
ել, եմ, *v. subst.* être [84].
ելանել, եմ, ելի, *v. i.* sortir, monter; — զկնի, suivre, *gén.*

ելք, **լից**, **լիւք** *s.* montée, sortie, issue, événement.

Եկ, **եկայք**; **եկի**, **եկն**; **եկեալ**; **եկեսցէ**, impér., aor. II, part. et fut. de **գալ**.

եկեր, 3e p. s. aor. II de **ուտել**.

եղանիլ, **իմ**, **եղէ**, *v. subst.* être, devenir, arriver [86].

եղբայր, **բօր**, **բարբ**, *s.* frère [30].

եմուտ, 3e p. s. aor. II de **մտանել**.

եպիսկոպոս, **ի**, **աւ**, *s.* évêque.

Եպիփանոս, **նու**, *n. pr.* Epiphane.

եռ, *num.* trois.

եռանկիւն, **կեան**, **կեամբ**, *s.* triangle.

եռանկիւնի, **նւոյ**, **նեաւ**, *a.* triangulaire.

ես, **իմ**, **ինձ**, **զիս**, **յինէն**, **ինև**, pl. **մեք**, **զմեզ**, etc. [39], *pr. pers.* je, moi.

եստեղծ, 3e p. s. aor. II de **ստեղծանել**.

ետ, 3e p. s. aor. II de **տալ** [65].

[**ետ**, pour **հետ**, trace, vestige]. **յետ**, *prép.* après, depuis, *gén.*; **յետոյ**, *adv.* depuis, ensuite; **յետս**, *adv.*, en arrière. — Voyez **յետին**.

երազ, **ոյ**, **ով**, *s.* songe.

երազահան, **ի**, **աւ**, *s.* interprète de songes.

երազատես, **ի**, **աւ**, *s.* songeur.

երախայ, **ի**, **իւ**, *s.* catéchumène.

երանելի, **լւոյ**, **լեաւ**, *a.* heureux, bienheureux.

երասանակ, **ի**, **աւ**, *s.* bride.

երբեմն, *adv.* quelque part, quelquefois, une fois, un jour [90].

երեսուն, **սնի** ou **սնից**, **սնիւ** ou **սնիւք**, *num.* trente [34].

երեսք, **սաց**, **սօք**, *s.* face, visage. **յերեսաց**, de devant, à cause de.

երևեցուցանել, **եմ**, **ցուցի**, *v. t.* faire paraître, montrer.

երևիլ, **իմ**, **ւեցայ**, *v. i.* paraître, apparaître, se manifester.

երեւութանալ, **ամ՝** **ացայ**, *v. i.* apparaître, se présenter.

երեք, **երից**, *num.* trois. **երեքհարիւր**, trois cents [34].

երեքթեւեան, *a.* qui a trois ailes.

երէց, **րիցու**, **րիցամբ**, *s.* ancien, prêtre.

երթալ, **ամ՝** conj. **երթայցեմ** ou **երթիցեմ**; impér. **երթ**; fut. **երթայց** ou **երթիցեմ**; aor. II, **չոգայ** ou **չոքայ**; *v. i.* aller, partir [89].

երինջ, **երնջոյ**, **ջով**, *s.* jeune vache, génisse.

երիցութիւն, *s.* sacerdoce, prêtrise.

երկաթ, **ոյ**, **ով**, *s.* fer.

երկաթի, **թւոյ**, **թեաւ**, *a.* de fer [99].

երկայն, **ի**, **իւ**, *a.* long, étendu.

երկայնանիստ, *a.* étendu; — **լեառն**, montagne à large base.

երկինք, **կնից**, **կնիւք**, *s.* ciel.

երկիր, **կրի**, **կրաւ**, *s.* terre, pays.

երկիցս, *adv.* deux fois. — **անգամ՝** id.

երկիւղ, **ի**, **իւ**, *s.* peur, crainte.

երկու et **երկուք**, **երկուց**, *num.* deux.

երկոքեան ou **երկոքին**, **կոցուն**, *num. distr.* tous les deux, chacun des deux [38].

երկսայրի, *a.* à deux tranchants.

երկրորդ, **ի**, **աւ**, *a. num.* second, deuxième [37].

երրորդ, **ի**, **աւ**, *a. num.* troisième.

եւ, *conj.* et; **և եւս**, **և** — **եւս**, et aussi, et encore.

եւթանք, *num.* sept [33].

եւթն, **ի**, **իւ**, et **թան**, **թամբ**, *num.* sept [33].

եւթնուտասան, *num.* dix-sept [34].

եւթնուտասանամեայ, *a.* âgé de dix-sept ans [99].

եւս, *conj.* aussi, encore.

Եփրեմ՝ *n. pr.* Ephraïm.

եօթանասունքն, *նից*, *s.* les Septante, traducteurs grecs de l'Ancien Testament.

Զ

զ, *prép. préfixe;* marque l'accusatif determiné [17]; avec l'ablatif, le cas narratif [120]; avec l'ablatif ou l'instrumental, le circumlatif [120, 123].

զազիր, *զրաց* ou *զրից*, *a.* malpropre, sale, dégoûtant. Comparatif *զազրագոյն*.

զահի, v. *ահ*.

զառաջինն, *adv.* premièrement, d'abord.

զատ, *a.* séparé, isolé.

զատանել, *եմ*, *տի* ou *զատել*, *եմ*, *եցի*, *v. t.* séparer, isoler, distraire.

զատուցանել, *եմ*, *տուցի*, *v. t.* séparer.

զարդ, *ու*, *ու*, *s.* ornement.

զարթնուլ, *ում*, *թեայ* [64], *v. i.* se réveiller.

զարհուրիլ, *իմ*, *եցայ*, *v. i.* s'effrayer.

զարմանալ, *ամ*, *ացայ*, *v. i.* admirer, s'émerveiller, être étonné.

զբաղումն, *զման*, *մունք*, *մանց*, *s.* occupation, distraction.

զգաստ, *ի*, *իւ*, *a.* vigilant, sage, honnête.

զգաստասէր, *սիրի*, *րաւ*, *a.* honnête, modéré, prudent.

զգենուլ, *ում*, *զեցայ*, *v. t.* revêtir, endosser.

զգեստ, *ու*, *ու*, *s.* habit, vêtement.

զգետնել, *եմ*, *եցի* *v. t.* terrasser, jeter par terre.

զգետնի, *adv.* à terre; v. *գետին*.

զգեցուցանել, *եմ*, *ցուցի*, *v. t.* faire revêtir, habiller.

Զելփա, *այ*, *n. pr.* Zelpha, esclave de Léa.

զենուլ, *ում*, *նի*, *v. t.* immoler, tuer.

զէն, զինու, *s.* armes.
զի, *conj.* que, afin que, car, comme; *est parfois explétif et sert à introduire le discours direct, comme* ? *en syriaque et* ὅτι *en grec.*
զի՞, *pr. interr.* [47] et *adv.* quoi? quelle chose? pourquoi?
զիա՞րդ, *adv.* comment.
զինուոր, ի, աւ, *s.* soldat.
զինուորական, ի, աւ, *a.* militaire.
զի՞նչ, *pr. interr.* que? quoi? [47].
զկնի, *prép.* après, derrière, *gén.* — *adv.* en arrière, derrière; v. կինք.
զհետ, v. հետ.
զրահք, հից, cuirasse.
զրոյց, րուցի, րուցաւ, *s.* discours, récit, réponse [12].
զօր, ու, ու et աւ, *s.* armée, gens de guerre.
զօրաժողով, *s.* celui qui lève une armée; — լինել, lever des troupes.
զօրանալ, ամ, ացայ, *v. i.* prédominer, règner, croître.
զօրութիւն, *s.* puissance, force, vertu.

Է

է, 3e p. s. indic. prés. de ել.
էած, 3e p. s. aor. II de ածել.
էառ, 3e p. s. aor. II de առնուլ.
էի, էիր, etc. [84], imparf. de ել.
էջ, 3e p. s. aor. II et 2e p. impér. de իջանել.
էջք, իջից, իջիւք, *s.* descente.

Ը

ըմպել, եմ, արբի, *v. t. irr.* [88], boire.

ըմբռնել, եմ, եցի, *v. t.* prendre, tenir, saisir; IV. être pris, enlacé.

ընդ, *prép.* pour, *gén.*; à, vers, contre, dans, parmi, avec, *accus.*; avec, *dat.*; sous, *instrum.*

